ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3/3.3-24
ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի
նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված
մրցութային հանձնաժողովի նիստի

2024թ. օգոստոսի 8-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի N2433-Ա հրամանի 1-ին կետի 2-րդ ենթակետով հաստատված 2024 թվականի «Աջակցություն զբոսաշրջության զարգացմանը» ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) հավելված N2-ի **3.3 կետով** նախատեսված **«Աջակցություն Հայաստանում իրականացվող միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչին»** միջոցառման իրականացումն ապահովելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի 2023 թվականի դեկտեմբերի 6-ի N22-Ա հրամանով ստեղծված մրցութային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Նիստին մասնակցում էին՝

Ս.Հակոբյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի նախագահի առաջին տեղակալ՝ Հանձնաժողովի նախագահ
Ա.Մկրտչյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության պետ
Ս.Ասլիզադյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության խորհրդական
Ս.Հովհաննիսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության պետ
Ա.Սողբաթյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի միջազգային համագործակցության վարչության գլխավոր մասնագետի պաշտոնակատար
Լ.Պետրոսյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի մարքեթինգի և խթանման վարչության խորհրդական
Շ.Հովսեփյան	-	ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի զբոսաշրջության քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, Հանձնաժողովի քարտուղար

Քվորումն ապահովված է:

Լսեցին՝
Հանձնաժողովի նիստի օրակարգի մասին:
Որոշեցին՝
Հաստատել Հանձնաժողովի նիստի օրակարգը.
- մրցույթի արդյունքների վերջնական ամփոփում:

Լսեցին՝
Տեղեկատվություն՝ 2024 թվականի հուլիսի 30-ին կայացած նիստի N46/3.3-24-ԴՄ որոշմամբ ընդունված առաջարկի արդյունքների վերաբերյալ:
Հանձնաժողովի քարտուղարը տեղեկացրեց, որ
Ծրագրի հավելված N2-ի **3.3 կետով** նախատեսված **«Աջակցություն Հայաստանում իրականացվող միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչին»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող կազմակերպությունը՝ «ԳՐԻԻՆ ՌՈՔ

ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, 2024 թվականի օգոստոսի 8-ին էլեկտրոնային գրությամբ ընդունել է Մրցութային հանձնաժողովի կողմից՝ ծրագրի գործողությունների ժամանակացույցը մրցույթի հրավերի պահանջներով նշված ժամկետին (մինչև 2024 թվականի նոյեմբերի 1-ը) համապատասխանեցնելու առաջարկը, տեղափոխելով միջոցառման անցկացումը հոկտեմբերի 26-27-ը:

Հաշվի առնելով վերոնշվածը, առաջարկվեց Ծրագրի հավելված 2-ի **3.3 կետով նախատեսված «Աջակցություն Հայաստանում իրականացվող միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչին»** միջոցառման իրականացման նպատակով հայտարարված մրցույթի արդյունքում «ԳՐԻԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն ճանաչել հաղթող:

Կայացավ քննարկում, որի արդյունքում
Հանձնաժողովը միաձայն որոշեց՝

1. **Հաղթող ճանաչել** Ծրագրի հավելված N2-ի **3.3 կետով** նախատեսված **«Աջակցություն Հայաստանում իրականացվող միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչին»** միջոցառման իրականացման համար հայտարարված մրցույթի հրավերով սահմանված չափորոշիչներին համապատասխանող 1 (մեկ) կազմակերպություն՝
   - **«ԳՐԻԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն**:
2. **Կնքել** համապատասխան դրամաշնորհի պայմանագիր Ծրագրի հավելված N2-ի **3.3 կետով** նախատեսված **«Աջակցություն Հայաստանում իրականացվող միջոցառումների զբոսաշրջային բաղադրիչին»** միջոցառման իրականացման համար՝
   - **«ԳՐԻԻՆ ՌՈՔ ՄԵՆԵՋՄԵՆԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ՝ 40.800.000 (քառասուն միլիոն ութ հարյուր հազար) (այդ թվում՝ 6.800.000 (վեց միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ ԱԱՀ))** ՀՀ դրամ գումարի չափով:
3. Հանձնաժողովի որոշումը ներկայացնել զբոսաշրջության կոմիտեի նախագահի հաստատմանը:

Ս.Հակոբյան - _____
(հանձնաժողովի նախագահ)

Ա.Մկրտչյան - _____

Ս.Ասլիզադյան - _____

Ս.Հովհաննիսյան - _____

Ա.Սողբաթյան - _____

Լ.Պետրոսյան - _____

Շ.Հովսեփյան - _____